Պատվավոր ուղի

Չորս տարեկան փոքրիկը, ազգի գլխին կախված՝մեծագույն ցավին անտեղյակ ու սեփական ցավից սարսափահար՝ մորն էր փնտրում. աշխարհը շուռ էր եկել բոլորի գլխին, ինքը՝ մի մատ երեխա, սարսափն արցունքակալ աչքերում, փախչողների ոտքերի տակ ընկած՝ կորցրած մոր փեշն էր փնտրում:

Անհուսության ու անգիտության ցավից գալարվող ու դեպի անհայտություն ձգվող բազմության ինչ-որ մի մասում էլ որդուն կորցրած մայրն էր իրեն ծվատում՝ Համբո՛, Համբարձո՛ւմ...

«Մա Ստեփանի տղան է»՝ իրենց գյուղից, իրեն անծանոթ մի քեռի ճանաչում է երեխային ու տանում ծնողներին: Ցավ, սարսափ, ուրախություն՝ բռունցքաչափ սիրտը ծվատվում է զգացմունքներից, ու տղան պինդ կպչում է մորը, ծուվվում նրան...

1915-ի ամառն էր. աշխարհը շուռ էր եկել հայերի գլխին, ու սասունցիների, հպարտ, խրոխտ, պատվասեր ու հայրենասեր սասունցիների, հուսահատ քարավանը ձգվում էր դեպի անհայտություն: Նրանց հետ չարչարանաց ճամփա էր անցնում նաեւ չորս տարեկան Համբարձումը՝ ծնողներին գտած վայելքից երջանիկ, աշխարհքի չարից անտեղյակ...

Տարագիր սասունցիները, էրգրի կարոտը սրտում, մի օր իրենց Սասունը դառնալու հաստատակամությամբ՝ Հայաստան հայրենիքում նոր Սասուն են հիմնում, Աշնակ գյուղ ու սասնա ավանդույթներով, սովորույթներով, սասնավարի՝ երկիրը շեն պահում:

Սասունցի Ստեփանի Համբարձում որդին 1935-ին դիմում է գրում Հայաստանի ներքին գործերի ժողկոմ՝ «Հոգով չափ սիրում եմ միլիցիայի ծառայությունը եւ խնդրում եմ ինձ ընդունել աշխատանքի»:

Ծառայում է մինչեւ 1964 թվականը: ՆԳ ժողկոմատի Թալինի բաժնի անձնագրային բաժնի պետի տեղակալ, Երեւան քաղաքի միլիցիայի ԲԽՍՍ ծառայության օպերլիազոր, Սեւանի ՆԳ բաժնի պետի տեղակալ, մայրաքաղաքի միլիցիայի ԲԽՍՍ պետ, 12-րդ քաղմասի պետ, Կոտայքի ՆԳ բաժնի պետ, Երեւանի 26 կոմիսարների շրջանի ՆԳ բաժնին կից պահպանության բաժնի պետ. սրանք աշխատանքային այն ճակատներն են, ուր մինչեւ 1964 թվականը ծառայել է միլիցիայի մայոր Համբարձում Դավթյանը: Հանցավորության դեմ պայքար, հասարակական կարգուկանոնի պահպանում՝ բոլոր ժամանակներում էլ նույն՝ ոստիկանի պատվավոր ծառայություն, որ իր ժամանակներում պատվով է կատարել միլիցիայի մայոր Համբարձում Դավթյանը:

Թոշակի անցնելուց հետո հայրենի Աշնակ գյուղի մի քարքարոտ տարածքում սեփական ձեռքով տուն է կառուցում, այգի տնկում ու դրախտի կտոր իր արքայությունում վայելում վաստակած հանգիստը: Կյանքն անցողիկ վայելք է, մնայունը աշխարհն է, բնությունը, իմ այգին ու թողած բարի անունը՝ նաեւ փիլիսոփայում էր՝ ճշմարիտ, իմաստուն:

Յուրաքանչյուր ժամանակ ի՛ր հրամայականն ունի եւ ի՛ր հրամայականն է առաջադրում. ժամանակի բեռը տանողները, լուծը քաշողները արդեն յուրովի են ընկալում-իրագործում հրամայականը՝ ըստ իրենց մարդ-տեսակի, ըստ իրենց բարոյականության, արժեքների արժեւորման սեփական չափանիշների: Միլիցիայի սպա Համբարձում Դավթյանի ծառայությունը հարթ չի եղել. 37 թիվ, Մեծ հայրենական, հետպատերազմյան ծանր տարիներ, սովետական ճնշիչ մեքենայի արտաքուստ աննկատ, բայց անհատի հոգին մամլող-տեսակը ձեւախեղող, իր՝ իբր համամարդկային-ինտերնացիոնալ, իրականում՝ շինծու արժեքները հարկադրող, շշմեցնող-բթացնող գաղափարախոսություն: Պատվասեր ու ավանդապաշտ, բարեկիրթ, սասունասեր Համբարձում Դավթյանի համար դժվար է եղել: «Անձնական գործի» խունացած, տասնամյակների փոշով ծածկված էջերը մի անհանգիստ ու լարված կյանքի շունչ են պահում իրենց մեջ, խայթոցներից ծառս եղած հոգու խռովք են պահում, մեկուսի ապրված ցավ: Անհատի զուսպ ապրումների ու հարկադրական բացատրությունների մեջ այնպիսի խոր ցավ կա, որ ալիք-ալիք հորդում ու քո ժամանակներն է հասնում: 50-60-ականներին հանդգնորեն Սասնո խրոխտ երգեր երգող սպան կեղծ ապրել չի կարողացել: Իրավունք չի ունեցել: Իսկ մեքենան գործում էր, դավեր էր նյութում «ազգայնամոլների» դեմ: «Մեր աղբյուրները հայտնում են, որ օբյեկտը եղել է դաշնակցական, մտերիմ է դաշնակ Տոնոյի հետ»... Եվ այլն, եւ այլն... Հետո «աղբյուրները» համառորեն սասունցի Համբարձումի դեմ փնտրել են հակասովետական այլ փաստեր, բայց տանուլ են տվել, ու որոնումները սկսել են այլ դաշտում: Մարդը տառապել է, լարվել, անհանգիստ ու նյարդային օրեր ապրել, գրել է, ապացուցել, որ ինքը համակարգին, հայրենիքին, հասարակությանը, միլիցիային նվիրված զինվոր է: Իսկ ապացույցների, հավաստիացումների կարիք չի էլ եղել. Համբարձում Դավթյանն իսկապես այդպիսին էր, պարզապես ժամանակ առ ժամանակ մեքենան հոգեմաշ ստուգումներով էր անցկացնում նրա նման վառ անհատականություններին:

Մահվանից առաջ Համբարձում Դավթյանը զավակներին կտակ էր թողել՝ եթե չկարողանաք ինձ տանել Սասուն, ապա Աշնակ գյուղում կթաղեք. չընկճվեք, չխեղճանանք, կարողացեք մարդամեջ մարդավայել դուրս գալ, ու ամեն տարի իմ ծննդյան օրը՝ մայիսի 9-ին, հավաքվեք-եկեք Աշնակ՝ գերեզմանիս մոտ, ուրախություն արեք:

Հոր մահից՝ 1983-ից հետո, զավակներն ամեն մայիսի 9-ին այդպես էլ անում են: Գիտեն, որ հոր հոգին վերեւից հսկում-տեսնում է ամեն ինչ...

Համլիկ ԻՍՊԻՐՅԱՆ